

ՄԱԿԲԱՅ > ՄՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Լեզվի բառային կազմը բաղկացած է ամենաբազմազան բառերից՝ սկսած նյութական իմաստ ունեցող բառերից և վերջացրած բառային իմաստից զուրկ միավորներով:

Լեզվի բառապաշարը, ըստ նրա մեջ մտնող բառերի ամենաընդհանուր իմաստների և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների, բաժանվում է որոշակի խմբերի, որոնք կոչվում են խոսքի մասեր¹:

Կենդանի խոսքում բառը մի խոսքի մասից կարող է անցնել մի այլ խոսքի մասի: Կայուն խոսքիմասային արժեք ունեցող բառը աստիճանաբար ներառում է այլ արժեքներ և լեզվի պատմական զարգացման ընթացքում վերածվում այլ խոսքի մասի²:

Խոսքիմասային փոխանցումները ընթանում են ինչպես նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի միջև, այնպես էլ լիիմաստ բառերից դեպի սպասարկու բառեր: Այդ առումով չթեքվող խոսքի մասերի բառային կազմը հարստանում է նյութական խոսքի մասերից դեպի սպասարկու բառերը կատարվող խոսքիմասային փոխանցման միջոցով:

Բառի՝ մի խոսքի մասից մյուսին անցնելը բառի իմաստի փոփոխության հետ կապված երևույթ է: Բառի իմաստի փոփոխությունը և այդ նույն բառի խոսքիմասային պատկանելության փոփոխությունը իրար հաջորդող երևույթներ չեն, այլ հանդիսանում են միևնույն երևույթի տարբեր կողմերը, որոնք զուգակցված են միմյանց:

Երբ բառերի իմաստափոփոխությունը կատարվում է խոսքիմասային մակարդակով, այն հանգեցնում է խոսքիմասային փոխանցման³:

Մեր խնդրո առարկան է քննել մակբայական սերիչ կաղապարներից խոսքիմասային փոխանցումները դեպի սպասարկու բառեր:

Այդ կարգի անցումները տեղի են ունենում մեծ մասամբ բառերի շարահյուսական կիրառությունների հիման վրա և կատարվում են երկու եղանակով՝

¹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 71:

² Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985, էջ 3:

³ Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 128:

նյութական իմաստի վերացարկմամբ և բառածևի բառական ու քերականական իմաստի մթագնման կամ քարացման հետևանքով:

Մակբայը, լինելով չթեքվող խոսքի մաս, բառածևեր չունի, այդ պատճառով էլ մակբայական սերիչ կաղապարներից դեպի սպասարկու բառեր խոսքիմասային փոխանցումները տեղի են ունենում մակբայի նյութական իմաստի վերացարկման և հարաբերության ու եղանակավորության իմաստի զարգացման, ծավալման հետևանքով:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում մակբայական իմաստ ունեցող այս կամ այն բառը կարող է համատեղել մեկից ավելի խոսքիմասային արժեքներ: Գործածվելով այլ խոսքի մասի կիրառությամբ՝ բառի խոսքիմասային իմաստը երկփեղկվում է: Հետագա զարգացումը հասցնում է նրան, որ բառը զրկվում է իր հիմնական իմաստից, նրա նյութական նշանակությունը վերացարկվում է, և այն փոխանցվում է ոչ նյութական խոսքի մասի:

Առարկայական նշանակությամբ թուլացած բառերը, դրվելով բայի վրա, մակբայական իմաստ են արտահայտում, դրվելով գոյականների վրա՝ կապային իմաստ են արտահայտում: Ժամանակակից հայերենում մի շարք բառեր համատեղում են մակբայների և կապերի խոսքիմասային արժեքներ:

Վրա բառը, որը տարածական իմաստ է արտահայտում, զրաբարում համատեղում էր մակբայի և նախադրության խոսքիմասային արժեքներ:

Անկեալ *ի վերայ* կարասցէ զնա գերծուցանել (Փարպ., 139), - մկբ.:

Կամեր անկանել *ի վերայ* թագավորին Հայոց (Բուզ., 17), - նխդր.:

Ժամանակակից հայերենում *վրա* բառը հանդես է գալիս կապի խոսքիմասային արժեքով, որ հետևանք է ի նախդրի կորստի. *ի վերայ* > *վրա*:

Կուզե՞ս լինեն վարդ նազելի՝

Կրծքիդ *վրա* վառվիմ (ԱԻ, 18), - կապ:

Մոտ բառը զրաբարում արտահայտում էր «1. ած. մոտավոր, մոտակա, 2. մկբ. մոտիկ, կողքին, 3. նխդր. կից, մերձ, ոչ հեռու» իմաստները: Նյութական իմաստի վերացարկման հետևանքով *մոտ* ածական // մակբայից ժամանակակից հայերենում առաջացել է *մոտ* կապը՝ «կողքին, կողքը» իմաստով:

Հմմտ. զրաբարում.

Մամիկոնեանն Վահան *մօտ*՝ ի նա ի Վարայր-վարոյն ի Հոռոմ տան (Փարպ., 145) - ած.:

Եթե *մօտ* ոչ գային, զիա՞րդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անունանս յօրինէր (Եզն., 68), - մկբ.:

Պատահէ նմա տեղի օթարանին *մօտ* առ դիրս սրբոյ Առաքելոյն (Խոր., 212), - նխդր.:

Ժամանակակից հայերենում.

Ես ձեզ ասում եմ՝ կըզա Ոգու սով,

եվ դուք կըքաղցեք ճոխ սեղանի մոտ (ԱԻ, 135), - կապ:

Ընդդեմ մակբայը գրաբարում ուներ «հակառակ» իմաստը. ժամանակակից հայերենում *ընդդեմ* մակբայից նյութական իմաստի վերացարկունով առաջացել է *ընդդեմ* կապը՝ «դեմ, դիմաց, հանդիման, հանդեպ» իմաստներով: Հմմտ. գրաբարում.

Եւ ոմն մերկանայ զհանդերծ ընկերին, և թէ *ընդդեմ* դառնայցէ յարեւ ևս արկանէ (Եզն., 19) - մկբ.:

ժամանակակից հայերենում.

Կրծքաբաց ելնել *ընդդեմ* քո սրին

Եվ այդ մահաբեր ծեռքը համբուրել (ՎՏ, 79), - կապ:

Իբրև մակբայը գրաբարում արտահայտում էր «1. մկբ. երբ, երբ որ, 2. նխդր. որպես, ինչպես, նման, իբր» իմաստները: Նյութական իմաստի վերացարկման հետևանքով ժամանակակից հայերենում *իբրև* մակբայից առաջացել է *իբրև* կապը:

Հմմտ. գրաբարում.

Իբրև տեսանէր, տայր իրաման հանել փողոտել զմանկունսն (Բուզ., 70), - մկբ.:

Ամենայն անձն ... լսէր իրամանք նորա, *իբրև* թագաւորի (Փարպ., 150), - նխդր.:

ժամանակակից հայերենում.

Տեսե՞լ եք արդյոք այն այգիները,

Ուր *իբրև* գոհար խաղողն է հասնում (ՀԹ, I, 160), - կապ:

Ներքո բառը գրաբարում արտահայտում էր «1 մկբ. ներքուստ, ներսից, ներսի կողմից, 2. նխդր. տակ, ներքին» իմաստները: Ժամանակակից հայերենում *ներքո* մակբայից առաջացել է *ներքո* կապը՝ նյութական իմաստի վերացարկման հետևանքով:

Հմմտ. գրաբարում.

Սերոյ աշխարհիս բնիկք պակասաւորք արք այնոքիկ, զորուց զանուանան *ի ներքոյ* դրոշմեսցուք (Խոր., 67), - մկբ.:

Եւ ամենատէր խորտակէ զսատանայ *ի ներքոյ* ոտից ձերոց (Փարպ., 91), - նխդր.: ժամանակակից հայերենում.

Իսկ այրված կյանքիդ մոխիրները տաք

Յրված կլինեն երկնքի *ներքո* (ՍԿ, 62), - կապ:

Յետո բառը գրաբարում արտահայտում էր «ապա, այնուհետև» նյութական իմաստը և հանդես էր գալիս մակբայի խոսքիմասային արժեքով:

Յետոյ բղխեալ եռացեալ յերկրէ ամենայն չորքոտանեաց ազգ (Ազաթ., 135), - մկբ.:

ժամանակակից հայերենում նյութական իմաստի վերացարկման հետևանքով *հետո* մակբայից առաջացել է *հետո* կապը:

Հետո չասեք, թե մենք քընած –

Դավիթ գող-գող եկավ, գնաց (ՀԹ, II, 125), - մկբ.:

Տարիներ *հետո* քեզ տեսա նորից,

Սիրտս արտասվեց, բայց ժպտացի ես (ԱԻ, 197), - կապ:

Մինչև մակբայը գրաբարում ուներ «մինչդեռ, մինչ որ, քանի դեռ» իմաստները: Նյութական իմաստի վերացարկման հետևանքով ժամանակակից հայերենում *մինչև* մակբայից առաջացել է *մինչև* կապը, որից էլ *մինչև* շաղկապը:

Հմմտ. գրաբարում.

Քանդեալ բրեժն գերկիրն, *մինչև* ի հիմանց կործանեին (Բուզ., 123), - մկբ.:

Բնակեցուցանե՛լ յարևելեաց ուսոյ մեծի լերինն *մինչև* ի սահմանս Գողթան (Խոր., 83), - նխդր.:

Այնպես երկար որոտացեալ, *մինչև* թմրեալ լինեին մարդիկ (Ագաթ., 97), - շաղկապ.:

ժամանակակից հայերենում.

Են օրվանից *մինչև* օրս էլ

Շունն էս բանը չի մոռացել (ՀԹ, I, 267), - կապ:

Կրկին վազում էր աղջիկն հեփհե,

Մինչև խավարն իջավ անտառում (ԱԻ, 308), - շղկապ:

Հանդիման բառը գրաբարում հանդես էր գալիս մակբայի և նախադրության խոսքիմասային արժեքներով:

Այսպես՝ «1. մկբ. դեմառդեմ, դիմացը».

Եղեալ *յանդիման* թագաւորին՝ տեղեկանայր ի նմանէ թագաւորն Պերոզ (Փարպ., 117), - մկբ.:

«2. նխդր. դեմ, դիմաց, առջև, ընդդէմ».

Ապա և *յանդիման* Վահանայ տայր ասել Վրուայ զբանսն (Փարպ., 117), - նխդր.:

Նյութական իմաստի վերացարկման հետևանքով ժամանակակից հայերենում *հանդիման* մակբայից առաջացել է *հանդիման* կապը:

Եկավ, կանգնեց մեր *հանդիման* (ՀԹ, I, 314), - կապ:

Դուրս բառը, որը առաջացել է գրաբարյան *դուռն* գոյականից բառածևի բառական ու քերականական իմաստի մթագմման ուղիով՝ *դուռն > դուռնք > դուրեն > դուրս*, ժամանակակից հայերենում համատեղում է մակբայի և կապի խոսքիմասային արժեքներ:

Հմմտ. գրաբարում.

Ազդ լիցի նոցա, որպէս ... մեղուաց՝ *զդուրս* մեղուանոցացն յառաջ քան գցուրտն ականամոմով խնկոյ (ԵԶՆ., 175), - գոյ.:

ժամանակակից հայերենում.

Եվ մեկը հանկարծ խնդաց խավարում –

Դուրսը, դաշտերի մենակության մեջ (ԵՉ, 15), - մկբ.:

Անսկիզբ է նա, ժամանակից *դուրս*,

Եվ հավերժ ամմահ (ԱԻ, 283), - կապ:

Ուստի բառը գրաբարում արտահայտում էր դերանվան, մակբայի և շաղկապի խոսքիմասային իմաստներ՝ «1. դ. որտեղից, 2. մկբ. որտեղից լինելը, 3. ուրեմն, հետևաբար, նրա համար»:

Ահա ասասցուք և յաղագս մահուանն Շամիրամայ, թե *ուստի* և որպես (Խոր., 56), - դեր.:

Ես դառնայ անդրեն յարևելս հարաւոյ, *ուստի* եկն (Խոր., 26), - մկբ.:

Ուստի տարակուսեալ Արշակայ՝ յո՛ւ է պատգամ առ իշխան գօրսն Պարսից (Խոր., 298), - շղկպ.:

Ժամանակակից հայերենում նյութական իմաստի վերացարկման հետևանքով *ուստի* մակբայից առաջացել է *ուստի* շաղկապը:

Կըռունկ, *ուստի*՝ կուգաս, ծառայ եմ ծայնիդ (Քրեստ., 176), - մկբ.:

Քարն իր ծավալով է ջուր արտամղում,

Ուստի հարկավոր է լինել ոչ թե թեթև,

Այլ մեծ ... և ծավալուն (ՊՍ. Ա., 27), - շղկպ.:

Ապա բառը գրաբարում արտահայտում էր «1 մկբ. հետո, այնուհետև 2. շղկպ. ուրեմն, հետևաբար» իմաստները: Ժամանակակից հայերենում *ապա* մակբայից առաջացել է *ապա* շաղկապը, որից էլ *ապա* եղանակավորող բառը:

Հմմտ. գրաբարում.

Ապա յետ այտորիկ թագաւորեաց խոսրով Կոտակ (Բուզ., 61), - մկբ.:

Չի եթէ անարատ էր, *ապա* ոչ յիւրմէ բնութենէն փոխէր (Եզն., 53), - շղկպ.:

Ապա հայեցարուք յարժանն (Փարպ., 123), - եղնկ. բառ:

Ժամանակակից հայերենում.

Ապա քուն մտան անհոգ, բախտավոր (ԱԻ, 238), - մկբ.:

Եվ եթե սենեկապետը չգիտե Անահիտի ամրոցում լինել-չլինելը, *ապա* էլ ո՞վ կիմանա (ԴԴ, 245), - շղկպ.:

Ապա քեզ տեսնեմ, մեր տղա (ՀԹ, III, 322), - եղնկ. բառ:

Միայն բառը, որն արտահայտում է «մենակ, միայնակ, լոկ, միմիայն» իմաստները, գրաբարում հանդես էր գալիս ածականի, մակբայի և եղանակավորող բառի խոսքիմասային արժեքներով:

Նա *միայն* մնաց առանց այնց արանց (Փարպ., 146), - ած.:

Մինչև չև էր ինչ բնաւ ... Զրուան *միայն* էր (Եզն., 135), - մկբ.:

Մեր *միայն* ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուց (Փարպ., 59), - եղնկ. բառ:

ժամանակակից հայերենում *միայն* բառը հանդես է գալիս մակբայի և եղանակավորող բառի խոսքիմասային արժեքներով:

Այն, ինչ անել չկարողացան Արշակ-Վաղարշակ ...

Սա արեց *միայն*՝ անգնե ու անգորք (ՊՍ, Դ., 260), - մկբ.:

Միայն սիրո լարը մնաց

Սրտիս ամհուն խորքերում (ԱԻ, 45), - եղնկ. բառ:

Այսպիսով, լեզվի պատմական զարգացման ընթացքում մակբայական սերիչ կաղապարներից փոխանցում է կատարվել նյութական իմաստից զուրկ խոսքի մասերի՝ կապերի, շաղկապների, եղանակավորող բառերի: Խոսքիմասային այդ անցումները մակբայի շարահյուսական տարբեր կիրառությունների և նյութական իմաստի վերացարկման արդյունք են, որի հետևանքով հարստանում է սպասարկու խոսքի մասերի բառային կազմը:

Գրականություն

1. Ս. Աբրահամյան, Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
2. Եդ. Սղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
3. Ս. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970:
4. Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985:
5. Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
6. Ա. Զյուրջյան, Մակբայի հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ» հայոց լեզվի բաժին, 1961, N 1):

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

1. Ագաթ. - Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909:
2. ԱԻ - Ավետիք Իսահակյան, Բանաստեղծություններ, I հ., Երևան, 1950:
3. Բուզ. - Փափստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
4. ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1987:
5. Եզն. - Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ 1826:
6. ԵԶ - Եղիշե Չարենց, Երկեր, Երևան, 1955, 1985:
7. Խոր. - Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
8. ՀԹ - Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, հհ I, II, III (1940-1951), VI (1959):
9. ՊԱ - Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, հհ 1-4,6, 1972-1976:
10. ՍԿ - Սիլվա Կապուտիկյան, Հատընտիր, Երևան, 1979:
11. ՎՏ - Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1956:
12. Փարպ. - Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Սամիկոնեան, Տփղիս, 1904:
13. Քրեստ - Հայ գրականության քրեստոմատիա, Երևան, 1992: